

Կարծիք

Հայցորդ Աննա Շահենի Մկրտիչյանի «Ղարաբաղյան շարժման արձագանքները 1988-1994 թթ. ՀՀ մամուլում» թեմայի մասին:

Ներկայացվող թեման կարևորություն է ձեռք բերել Արցախյան շարժման առաջին իսկ օրերից, քանի որ դժվար էր պատկերացնել այն առանց լրատվամիջոցների՝ առավել ևս մի համակարգի, որը ավելի մեծ ազդեցություն ուներ և կարող էր լիովին և մինչև վերջ չվերահսկվել պետության կողմից: Այդ ժամանակների մամուլը, և դրանցում աշխատող լրագրողները տիրապետում էին այն նվազագույն տեղեկատվությանը, որը առնչվում էր Ղարաբաղյան խնդրին, իսկ ավելի ուշ՝ շարժմանը, դրանց առնչվող իրադարձություններին ու երևույթներին: Թերևս, Ղարաբաղյան շարժման ակտիվ պայքարի շրջանում անգամ՝ պատերազմի տարիներին, հայաստանյան և Ղարաբաղյան մամուլի միջոցների հրապարակումների անբաժանելի մասն է դառնում այն ամենը, ինչ կատարվում էր Արցախում և նրա շուրջը: Այս և նման իրողությունները հիմք են տվել հայցորդ Աննա Մկրտիչյանին ընտրել արդիական ու հետաքրքիր թեմա, որի մանրակրկիտ ու ամբողջական ուսումնասիրությունը կարող է մասնագիտական առումով ուսանելի լինել ինչպես մեր ժամանակաշրջանի, այնպես էլ ապագայի մեդիագրագիտության համար, չնայած փոխվել են լրատվամիջոցների տեսակները և գործելակերպը:

Այս ամենի հետ մեկտեղ դեռևս իր վերջնական լուծումը չի գտել Արցախյան խնդիրը, այլ հատնվել է աշխարհաքաղաքական բարդ զարգացումներում: Այս պայմաններում Հայաստանի և Արցախի մամուլի միջոցների հրապարակումների փորձը ոչ միայն պատմական զարգացումներն է ներկայացնում, այլև լրագրողական մոտեցումներ հուշում, որոնք պակասում են մեր ժամանակներում: Այստեղից էլ բխում է, որ ներկայացվող աստենախոսությունը ոչ միայն արդիական է իր թեմատիկ ուղղվածությամբ, այլև տեսագործնական նշանակությամբ, քանի որ մեր օրերում

պակասում են հենց միդիաուսումնասիրությունների այս տեսակը, երբ լրագրողներին հասու չեն իրենց նախորդների ուսանելի ու օգտակար փորձառությունը: Մամուլի այս բացը սույն աշխատանքով լրացնում է Աննա Մկրտիչյանը: Նա իր համակողմանի վերլուծություններով ձգտում է զարգացնել թեման՝ հաշվի առնելով թեմայի մշակվածության աստիճանը, որոնք ամբողջական բնույթ չեն ունեցել նախորդ տարիներին: Իսկ գիտական աշխատանքի հեղինակին հաջողվել է հրապարակումների տարբեր շերտերի և ժամանակային կտրվածքի հաշվառումով ներկայացնել Արցախյան շարժմանը նվիրված լրագրության զարգացման միտումները, օրինաչափությունները, առանձնահատկությունները:

Թերևս, այս մոտեցումն էլ հիմք է դարձել ներկայացվող աշխատանքի կառուցվածքի համար, որով էլ ձգտել է հեղինակը բացահայտել է բովանդակային ասելիքը և իր տեսակետները:

Հեղինակը առաջին գլուխը վերնագրելով «Ղարաբաղյան շարժման ակունքները Խորհրդային Հայաստանի մամուլում(1987-1988 թթ.)՝ հետահայաց վերլուծություն է կատարում ղարաբաղյան շարժման ակունքների վերաբերյալ, որոնց համատեքստում էլ դիտարկում է ժամանակի մամուլի սակավաթիվ, բայց արժեքավոր հրապարակումները: Դրանք ավելի հասկանալի ու ընկալելի պիտի դառնային ղարաբաղյան շարժման սկզբնավորումով ու դրա մասին մամուլի առաջին արձագանք-հրապարակումներով: Այստեղ հեղինակը իրավացիորեն հստակ տարանջատումներ է կատարում ղարաբաղյան հիմնախնդիրը դիտարկելով ազգային շարժումների գաղափարախոսության համատեքստում՝ կարևորելով լրատվամիջոցների դերակատարությունը համաժողովրդական խնդիրների արտահայտման գործում: Եվ տրամաբանական է, որ քննարկման առանցք է դառնում ղարաբաղյան շարժման սկզբնավորումը, և մամուլի ավելի ակտիվ ու հասցեական արձագանքները դրանց առնչվող տարբեր հրապարակումների միջոցով:

Հեղինակը ձգտում է վերլուծել հայաստանյան մամուլի ամբողջականությունը, որին բնորոշ չէր թեմատիկ համարձակությունը, քանի որ ավելի գերիշխում էին

կրավորական մոտեցումները, շատ հաճախ հասնելով ապատեղեկատվության, իսկ լավագույն դեպքում լռելուն: Ինչպես հեղինակն է նկատում, այս ամենով հանդերձ, մամուլը անդրադարձնում էր անհանգիստ վիճակը՝ առանձին հրապարակախոսական համարձակ ելույթներով: Օրինակ, Ջորի Բալայանի «Հիմի լռենք» ծավալուն հոդվածը լույս է տեսել «Ոգնի» երգիծական հանդեսում: Հասկանալի էր, որ այստեղ էլ մամուլի դուռը բացել էր «Ոգնու» գլխավոր խմբագիր, բանաստեղծ, հրապարակախոս Արամայիս Մահակյանը: Եվ բնական է, որ հետագա շարադրանքում՝ հաջորդ գլխում՝ «Ղարաբաղյան շարժման լուսաբանումը Խորհրդային վերջին տարիներին և մամուլի դերը հանրության արժեքային-գաղափարական դաշտի ձևավորման մեջ (1988-1991թթ)», հեղինակը ի թիվս այլ կարևոր խնդիրների՝ «ԼՂ-ի իրադարձությունների լուսաբանումը խորհրդային գաղափարախոսության պայմաններում», մանրակրկիտ վերլուծության է ենթարկում «հայ հրապարակախոսների արցախյան շեշտադրումները», քննարկում դրանց դրսևորումները մամուլում՝ զուգահեռաբար վերլուծելով դրանց ազդեցությունը լսարանի վրա: Գաղտնիք չէ, որ այդ ժամանակաշրջանում շատ էր կարևորվում հայ մտավորականության դերակատարությունը: Նրանք ակտիվ հասարակական պահվածք ու կեցվածք ունեին տարբեր միջոցառումներում: Եվ նրանց մեծամասնությունը իր պարտքն էր համարում հրապարակախոսական հոդվածների ներկայացումը թերթերում: Իսկ դա շատերի խոստովանությամբ իրենց առաջին հրապարակախոսական հոդվածներն էին: Ատենախոսության հեղինակի վկայությամբ այս մասին նշում է արձակագիր Պերճ Ջեյթունցյանը իր հարցազրույցներից մեկում: Դրվատալի է, որ հեղինակը ոչ միայն ներկայացնում է հայ մտավորականության փաղանգը, այլև վերլուծում նրանց կոնկրետ ու հասցեական հրապարակումները, որոնցում զգացական առատ շեշտադրումներից բացի ներկայացվում է այն ռացիոնալ ամբողջությունը, որը անհրաժեշտ էր դարաբաղյան շարժման ոգեկոչման համար:

Հեղինակը ամենայն մանրամասնությամբ բացահայտում է Արմեն Հովհաննիսյանի, Ջորի Բալայանի, Վարդգես Պետրոսյանի, Պերճ Ջեյթունցյանի և այլ

հեղինակների հրապարակախոսությունը: Արժեքավոր պետք է համարել գիտական հետազոտության այս հատվածը, քանի որ այն իր բովանդակությամբ, էությամբ ու ոգով կարող է օգտակար լինել նաև մեր ժամանակներում, երբ հրապարակախոսությունը չի պարունակում այն փաստաավավերագրական անհրաժեշտ հիմքը, որը նախկինում կարողանում էին կառուցել մեր մամուլի միջոցները, քանի որ նոր մեդիա հարթակներում հրապարակախոսությունը չունի այն շեշտադրումները, որոնք կոնկրետ առնչություններ ունեն գարգացումների բովանդակությանը և էությանը:

Ընդհանրապես, ճշմարիտ է հեղինակը, որ հրապարակախոսությունը տվյալ դեպքում և ժամանակշրջանում հանրայինը վերաբերմունք է պարունակում երկրի առջև ծառայած խնդիրների նկատմամբ: Եվ պատահական չէ հեղենակի վերլուծությունը նույն գլխի առաջին հատվածում, երբ մամուլը իր գործունեությունը ծավալում էր խորհրդային գաղափարախոսության շրջանակներում կամ ավելի ճիշտ կապանքների մեջ, իսկ ազգային շարժումը իր անկասելի գարգացումները ուներ, բայց լրատվական համակարգի գաղափարական կապանքները ակտիվորեն էին գործում, և իրենց բացասական դերակատարությունը ունենում:

Այս ամենով հանդերձ, անգամ գաղափարախոսական արգելքների և սահմանափակումների պայմաններում, Արցախը դարձավ հայությանը միավորող գործոն, իրողություն, որը լրատվամիջոցները կարողացան իրենց հրապակումներում հանրայնացնել:

Այս շրջանում իրադարձությունների գարգացումները արագ էին, բայց լրատվամիջոցները ցանկանում էին թաքցնել այն՝ մի կողմից, մյուս կողմից էլ՝ լրատվամիջոցների համար ստեղծված խոչընդոտները (թղթի, վառելիքի պակաս և այլ նման իրողություններ) խանգարում էին մամուլի միջոցների բնականոն գործունեությանը:

Թերևս, տրամաբանական է նաև հեղինակային վերլուծությունը երրորդ գլխի տեսքով՝ «Ղարաբաղյան շարժումը և անկախ Հայաստանի մամուլի ձևավորումը

(1991-1994 թթ.)» վերնագրով: Ինչ խոսք, որ այստեղ առաջին պլան պիտի մղվեր, ըստ հեղինակի, դիտարկումները հայ-ադրբեջանական հակամարտության շուրջ ծավալվող տեղեկատվական-քարոզչական գործողությունների մասին, որոնց քուրայում էլ ծնունդ էր առնում նորանկախ երկրի մամուլը՝ եղած ավանդույթների և նորօրյա զարգացման միտումների հիման վրա:

Չնայած առկա դժվարություններին, ինչպես հեղինակն է ընդգծում, մամուլը դարաբաղյան շարժմանն իր աջակցությունը բերեց, և սկսեց պատերազմի հերոսների ու նրանց ընտանիքների մասին նյութեր հրապարակել: Ինչ խոսք, որ հենց այս շրջանում է ձևավորվում ոչ միայն Հայաստանի, այլև ԼՂՀ մամուլը, որոնք իրենց հրապարակումներում տեղ են տալիս պատերազմական իրավիճակին առնչվող և դեպի զինադադար տանող ճանապարհը ներկայացնող հրապարակումներին: Իսկ հեղինակի պնդմամբ, այս ամենին հաջորդելու էր «ո՛չ պատերազմ, ո՛չ խաղաղություն» իրավիճակը, որի անդրադարձները պիտի կրեր արդեն ձևավորված մամուլի համակարգը:

Ատենախոսության հեղինակը աշխատանքը եզրափակում է 11 եզրակացություններով, որոնցում փորձ է արվում ամփոփել հիմնական ասելիքը, որ դարաբաղյան հիմնախնդիրը արդյունք է պատմական սխալների ու խեղաթյուրումների, որոնք տասնամյակների ընթացքում մնացել են տեղեկատվական վակումի ու անորոշության մեջ: Իսկ առանձին դեպքերում հրապարակված նյութերը ունեցել են փաստական ոչ անհրաժեշտ մտացածին հիմքեր: Իսկ այսպիսի իրավիճակը ճեղքեց նոր ձևավորող հրապարակախոսությունը, որը մամուլ բերեց հայ մտավորականության արժանավոր ներկայացուցիչների համարձակ խոսքը՝ նրանց միջոցով ներկայացնելով դարաբաղյան խնդրի իրական պատկերը: Հետագայում էլ Ղարաբաղում մամուլի համակարգի ստեղծումը զուգահեռ էր ընթանում պատերազմական պայքարին:

Չնայած դժվարություններին համակարգը կայացավ ու զարգացավ՝ իր հիմնական հրապարակումների մեջ ունենալով դարաբաղյան հիմնախնդիրը և դրա շուրջը

առկա հանրային կարծիքը: Փաստորեն, ըստ հեղինակի, 1988-1994 թվականներն էլ դարձան նորանկախ Հայաստանի և Արցախի մամուլի համակարգերի կայացման շրջան, որից կարելի է տարբեր դասեր քաղել նաև մեր ժամանակների համար:

Այս ամենով հանդերձ ներկայցվող աշխատանքը ավելի շահեկան կլիներ, եթե

1. Աշխատանքի շարադրանքի հիմքում չդրվեին միայն մամուլի ստեղծման և կայացման գործոնները, այլ ավելի մեծ տեղ տրվեին հրապարակումների ժանրաձևաչափային դրսևորումների, դրանց բաղկացուցիչների վերլուծությանը:

2. Ավելի համակողմանի քննարկման ու վերլուծության առարկա դառնային լրագրողական աշխատանքի առանձնահատկությունները պատերազմական և արտակարգ իրավիճակներում:

3. Հաշվի առնելով այն իրողությունը, որ թեման աղերսներ ունի մեր ժամանակի հետ, ցանկալի կլիներ կոնկրետ առաջարկությունների փաթեթ ստեղծել: Իսկ դա թույլ կտար ժամանակից լրատվամիջոցների գործունեությունը ավելի նպատակային դարձնել՝ հաշվի առնելով անցյալի փորձը:

Այս ամենով հանդերձ կարելի է եզրակացնել, որ Աննա Շահենի Մկրտիչյանի թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է նման աշխատանքների ներկայացվող պահանջներին և արժանի է, որ նրան շնորհվի Ժ.01.06 «Ժուռնալիստիկա» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի կոչում:



Պաշտոնական ընդդիմախոս՝

Սերգո Երիցյան բանասիրական
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

17.06.2022թ.